



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109,
bazum.lori@mta.gov.am

N 016/55
14 փետրվար 2019թ.

**ՀՀ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում եմք Բազում համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 01-Ա, 02-Ն, 03-Ա, 04-Ա, 05-Ա, 06-Ա և 07-Ա որոշումները:

Առդիր՝ 9 էջ և Բազում համայնքի ՏԱՊ-ը 32 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 01-Ա

ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու թիվ 1 նիստի օրակարգը:

1. Ավագանու թիվ 01 նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Բազում համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.
3. Համայնքի բնակիչներին դրամական օգնություն ցուցաբերելու մասին.
4. Ժամանակավոր փայտյա կացարանն օգտագործման տրամադրելու մասին.
5. Հողամասի նկատմամբ Գարուշ Վանիկի Սաղաթեյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին.
6. 2018 թվականի գույքագրման փաստաթղթերում փոփոխություն կատարելու մասին.
7. Բազում համայնքի <<Տարեկան աշխատանքային պլանը հաստատելու>> մասին.

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱԿԵՐԴՅԱՆ ՄԻՆԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՅԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

(Handwritten signatures of the council members)



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 02-Մ

**ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ-Ի ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական հնքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի 2019թ-ի բյուջեում կատարված փոփոխությունները:

Եկամուտների գծով
Ընդամենը 36865.3
այդ թվում՝
վարչական բյուջեի մասով՝ 36865.3

Ֆոնդային բյուջեի մասով՝ 0
Ճախսերի գծով
Ընդամենը 48597.3
այդ թվում՝
վարչական բյուջեի մասով 36865.3
Ֆոնդային բյուջեի մասով 11732.0

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱԿԵՐԴՅԱՆ ՄԻՆԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՅԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՃԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

(Handwritten signatures)





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 03-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՋՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով , համայնքի ավագանու 2014 թ-ի դեկտեմբերի 12-ի <<Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ Բազում համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին թիվ 31-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրազ ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածների:
- 3.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱԿԵՐԳՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՅԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

(Handwritten signatures)



ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12.02.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳԼՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Ասատրյան Ռուզաննա Կամսարի - /45000 /քառասուն հինգ հազար/ ՀՀ դրամ
2. Մնացականյան Սիրուն Մերենի - /30000/ երեսուն հազար դրամ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա. ՊԼՈՒՉՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՀ ԼՈՌՈՒՄ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12.02.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒՄ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻԶՆԵՐԻ
/ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ/

Անտիկյան Թեմուր Նարինանի - 15000 /տասնհինգ հազար դրամ /

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա. ՊԼՈՒՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 04-Ա

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓԱՅՏՅԱ ԿԱՑԱՐԱՆՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>
Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-
րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

Համայնքի բնակիչ Հայկ Արթուրի Հարությունյանին անորոշ
ժամանակով անհատույց օգտագործման տրամադրել 8 փողոց 1
կրթանոց 7/2 հասցեի փայտյա կացարանը:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՎԵՐԴՅԱՆ ՄԻՒԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՅԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 05-Ա

**ՀՐՈՒՄԱՍԻ ՆԿԱՏԱՄԲ ԳԱՐՈՒԾ ՎԱՆԻԿԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆԲԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ և 72-րդ հոդվածներով, <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ <<Քաղաքաշինության մասին>> օրենքով, ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01,06,2010 թվականի թիվ 186-Ն հրամանով, հիմք ընդունելով քաղաքացի Գ, Սաղաթելյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, գրանցամատյան 5237 15,10,2018 թվականի Հայաստանի ազգային արխիվ ՊՈԱԿ Լոռու մարզայի մասնաճյուղի 14,05,2010 թ, գրությունը N549 Համայնքի հողի հարկային բազան, հողի հարկի վճարման անդորրագրերը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման հրահանգի հիման վրա Բազում համայնքում 06-023-0234-0011 ծածկագրի տակ գտնվող 0,04836 հա բնակավայրերի կառուցապատման հողամասը քանի որ կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես համայնքային հողամաս , սակայն նշված հողամասը համաձայն Տավրոս համայնքի հանձնաժողովի 03,01,1995 թ նիստի արձանագրության թիվ 3 որոշման հատկացվել է Վանիկ Գարուշի Սաղաթելյանին և հատկացման օրվանից մինչև այսօր նշված հողամասը տիրապետվում է նրա մահից հետո նրա ժառանգների կողմից և վերջիններս օրենքով սահմանված կարգով կատարում են իրենց հարկային պարտավորությունները /հիմք՝ հողի հարկի բազա և վճարման անդորրագրեր/, ուստի առաջնորդվելով ՀՀ օրենսդրությամբ համայնքի ավագանին որոշում է 06-023-0234-0011 ծածկագրով 06-023-0234-0011 ծածկագրի տակ գտնվող 0,04836 հա հողամասի նկատմամբ ճանաչել Վանիկ Սաղաթելյանի օրինական ժառանգ Գարուշ Վանիկի Սաղաթելյանի սեփականության իրավունքը:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱԿԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՅԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 06-Ա

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>
հայաստանի կանոնադրության օրենքի 77 հոդվածի 3-րդ մասով և
<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 34 հոդվածի 7-րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

Կատարել փոփոխություն 2018 թվականի գույքագրման
փաստաթղթերում և ցանկում ներառել

1, Համակարգիչ կոմպլեկտ

2, Լուսավորության համակարգ

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0


ԱՆԱԿԵՐԴՅԱՆ ՄԻՆԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՅԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՇԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.iori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 07-Ա

ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկլարվելով <<Տեղական հնքնակառավարման մասին>>
Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 42
կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի 2019 թվականի <<Տարեկան
աշխատանքային պլանը>> համաձայն հավելվածի:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՎԵՐԴՅԱՆ ՄԻՆԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՅԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՃԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՈԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի 2019 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար Սրբուհի Հարությունյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 12.02.2019թ –ի թիվ 07-Ա որոշմամբ

ԲԱԶՈՒՄ 2019թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ-----	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ-----	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----	7
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2019Թ. ԾՐԱԳԻՐԸ -----	18
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----	19
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----	21

Ներածություն

Բազում համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

ՏԱՊ – ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

ՏԱՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

ՏԱՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2019 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

ՏԱՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2019 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

ՏԱՊ-ի 4-րդ բաժնում բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (**Աղյուսակ 8**) ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 47 որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ **համայնքի տեսլականն է՝ ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ կլինեն ձեռնարկություններ և մարդիկ կապրեն արժանապատիվ կյանքով:**

Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:

Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,

Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը

Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,

Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը

Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:

Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,

Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2018 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքին 2018 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի

պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2019 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

ՏԱՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ. ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	22,6	23,0
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	1758	1800
Համայնքում տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	11732.0	11732,0
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	1/3	1/20

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Ապահովել ՏԻՄ-ի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-ի, աշխատակազմի, ՀՈԱԳ-ի գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	22,6	23,0
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և	-	-	-

<p>միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>			
<p>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</p>			
<p>Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:</p>	<p>Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա)</p>	<p>ավելի շատ լավ, քան վատ</p>	<p>Բավական լավ</p>
	<p>Համայնքով անցնող միջպետական ճանապարհի մայթերի մաքրում</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>Բավական լավ</p>
	<p>Համայնքում կանգառների կառուցման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>Բավականին լավ</p>
	<p>Աղբարկղների շրջակայքերի բարեկարգման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>Ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>Բավականին լավ</p>
<p>Ոլորտ 5. Հողօգտագործում</p>			
<p>2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 6. Տրանսպորտ</p>			
<p>Բարելավել տրանսպորտի ծառայության բնագավառում ներհամայնքային ճանապարհների անցանելիությունը և բնակիչներին մատուցվող ծառայության որակը:</p>	<p>Համայնքային ենթակայության ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը</p>	<p>Ավելի շատ լավ, քան վատ</p>	<p>Բավական լավ</p>

	(հարցումների հիման վրա)		
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 8. Կրթություն			
Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:	ՏԻՄ-ի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)	Բավականին լավ	լավ
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 10. Առողջապահություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Բավականին լավ
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և	Համայնքի բնակիչների բավարարվածությունը	Ավելի շատ լավ,	Բավականին

սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)	քան վատ	լավ
	Տեղափոխված աղբի ծավալը, տոննա	72,0	108,0
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-

2. Համայնքի 2019 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	28159.9	Ամբողջ համայնքում
Ընդամենը		28159.9	
Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Համայնքում կանգառների կառուցում	1000.0	1-ին և 5-րդ փողոց
2.	Համայնքով անցնող միջպետական ճանապարհի մայթերի մաքրում	500.0	Համայնքի կենտրոնական հատված
3.	Ներհամայնքային լուսավորության համակարգերի ընդլայնում	1000.0	8-րդ փողոց
4	Աղբարկղների շրջակայքերի բարեկարգում	1000.0	Ամբողջ համայնքում
Ընդամենը		3500.0	
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	Ներհամայնքային ճանապարհների խճապատում	1000.0	Ամբողջ համայնքում
Ընդամենը		1000,0	
Ոլորտ 8. Կրթություն			
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	7350.0	Համայնքում

2.	Համայնքի դպրոցին ընթացիկ դրամաշնորհ	500.0	Համայնքում
Ընդամենը		7850.0	
Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	600.0	Ամբողջ համայնքում
2.	Հարազատին կորցրած ընտանիքներին դրամական օգնություն	400.0	Ամբողջ համայնքում
3.	Նորածին երեխաներ ունեցող ընտանիքներին խրախուսանք	120.0	Ամբողջ համայնքում
Ընդամենը		1120.0	
Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքում աղբահանության ծառայությունների մատուցում	650.0	Ամբողջ համայնքում
Ընդամենը		650.0	
Ընդհանուրը		42279.9	

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով չեն նախատեսվել:

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ . Ապահովել ՏԻՄ-ի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1.Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-ի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ի գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից – ավելի շատ լավ, քան վատ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝22,6%			
Ծրագիր 1.Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը – ավելի շատ լավ, քան վատ	Ծրագրի գնահատման համակարգ. Կկիսամյակային և տարեկան հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք	Համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար,	1 տարի	-
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:	Ելքային ցուցանիշներ 1 ՏԻՄ-ի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների	Տեղեկատվական աղբյուրներ. <<ՏՀԶՎԿ>> ՀԿ, <<Վեկտոր Պլուս>> ՀԿ, <<ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ>> Վանաձորի գրասենյակ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,	1 տարի	

	<p>իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) – բավականին լավ</p> <p>2.ՏԻՄ-ի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը-1</p> <p>3.Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 8%-ով</p> <p>4.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում-248 օր</p>	<p>Վանաձորի հաշվառման և քննարկման բաժին: Անձնագրային և վիզաների վարչության Գուգարքի խումբ:</p>			
<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատակազմի պահպանություն 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում 3. <<ՏՀԶՎԿ>> ՀԿ ծրագրի սպասարկում 4. Համայնքի անշարժ գույքի կառավարում 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 17600.0 հազ.դրամ 2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 10 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ 			
<p>Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <ol style="list-style-type: none"> 1.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ-7 %-ով 3.Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում-5 %-ով 4.Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում -3 %-ով 5.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում- 10%-ով 	<p>Տեղեկատվական աղբյուրներ</p> <p>Օրագրի գնահատման համակարգ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ, առաջատար մասնագետ /համակարգչային օպերատոր/</p>	<p>1 տարի</p>	
<p>Միջոցառումներ (գործողություններ) .</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքային ծառայողների վերապատրաստում: 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում: 3.Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում: 		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 4 2. Հողի հարկի, գույքահարկի, բազա՝ առկա է 3.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ՝ 3327.0 հազ.դրամ 			
<p>Միջանկյալ արդյունք 3.Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և</p>	<p>Ելքային ցուցանիշներ</p> <ol style="list-style-type: none"> 1. ՏԻՄ-ի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների 	<p>Տեղեկատվական աղբյուրներ</p> <p>Օրագրի գնահատման համակարգ, կիսամյակային,</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>1 տարի</p>	

<p>որակը</p>	<p>մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ, քան վատ 2.ՏԻՄ-ի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքների թիվը - 0 3. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը- շաբաթը 1 անգամ 4. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 3 օր</p>	<p>տարեկան հաշվետվություններ</p>			
--------------	--	----------------------------------	--	--	--

Միջոցառումներ (գործողություններ) .

1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում
2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում
3. Համայնքի գույքի կառավարման բարելավում
4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում
5. Աշխատակազմի աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավում
6. Համացանցային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում

Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).

1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 6
2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր – առկա է
3. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -2
4. Աշխատակազմում տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -2
5. Համայնքի պաշտոնական համացանցային կայք –առկա է

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Ոլորտային նպատակ.
 Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:

Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.

1. Բնակիչների բավարարվածությունը կանգառների առկայությունից (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ քան վատ:
2. Համայնքով անցնող միջպետական ճանապարհի մայրերի մաքրում (հարցումների հիման վրա) - միջին ոչ լավ, ոչ վատ:
3. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ քան վատ
4. Աղբարկղների շրջակայքի բարեկարգման աշխատանքներից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) – բավականին լավ:

Ծրագիր 1. Համայնքում կանգառների կառուցում

<p>Ծրագրի նպատակ. Ծառայության մատուցման մատչելիությունը համայնքում</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Համայնքում կանգառների կառուցում, բնակիչների բավարարվածության աստիճանը - բավականին լավ</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, Կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի տեղակալ, առաջատար մասնագետ (հողաշինարար), համայնքի</p>	<p>1 տարի</p>	
--	---	---	---	---------------	--

			բյուջեի միջոցների հաշվին:		
Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է բնակիչների ծառայության մատուցման մատչելիությունը և որակը համայնքում	Ելքային ցուցանիշներ 1. Կառուցված կանգառների թիվը -2 2.Բնակիչների կարծիքը կանգառների առկայությունից-բավականին լավ	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի տեղակալ, առաջատար մասնագետ (հողաշինարար), համայնքի բյուջեի միջոցների հաշվին:	1 տարի	
Միջոցառումներ (գործողություններ) 1. Կանգառների կառուցման աշխատանքներն իրականացնող կազմակերպության հետ պայմանագրի կնքում: 2. Կանգառների կառուցման ընթացիկ աշխատանքների իրականացում և վերահսկում : 3. Կառուցման աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 1000,0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 3 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ծրագիր 2. Համայնքով անցնող միջպետական ճանապարհի մայրերի մաքրում					
Ծրագրի նպատակ. Բարելավվել մայրերի վիճակը և մատչելիությունը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Մայրերի մաքրումից բնակիչների բավարարվածության աստիճանը - լավ,	Ծրագրի գնահատման համակարգ, Կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի տեղակալ, առաջատար մասնագետ (հողաշինարար), համայնքի բյուջեի միջոցների հաշվին:	1 տարի	
Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է մայրերի մատչելիությունը և անցանելիության որակը համայնքում	Ելքային ցուցանիշներ 1. մաքրվող մայրերի երկարությունը -1000 մ 2. Տարվա ընթացքում մայրերի ընթացիկ մաքրում - 1 4.Բնակիչների կարծիքը մայրերի մաքրման վիճակից – ավելի շատ լավ, քան վատ	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակություն, բնակիչներ	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի տեղակալ, առաջատար մասնագետ (հողաշինարար), համայնքի բյուջեի միջոցների հաշվին:	1 տարի	
Միջոցառումներ (գործողություններ) 1. Համայնքի մայրերի մաքրման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստում 2. Համայնքի մայրերի մաքրման աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Մաքրման աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 500.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 3 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			

Ծրագիր 3. Ներհամայնքային լուսավորության համակարգերի ընդլայնում /8-րդ փոդոց /

<p>Ծրագրի նպատակ. Բարձրացնել համայնքի փողոցներով երթևեկության անվտանգության մակարդակը, փողոցները դարձնել լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի, տրանսպորտային միջոցների համար:</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի փողոցները դարձել են լուսավոր, գեղեցիկ ու հարմարավետ համայնքի բնակիչների, հյուրերի, տրանսպորտային միջոցների համար - 75%-ով 2. Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 75%</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, Կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի տեղակալ, Իրականացումը՝ համայնքի բյուջեի միջոցներով</p>	<p>1 տարի</p>	
<p>Միջանկյալ արդյունք 1. Համայնքի փողոցները դարձել են լուսավոր, գեղեցիկ և բարեկարգ</p>	<p>Ելքային ցուցանիշներ 1. Փողոցներում տեղադրված լուսատուների քանակը -15 2. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից – բավական լավ 4. Ծրագրի իրականացման ժամկետը -1 ամիս</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,</p>	<p>Համայնքի ղեկավար Համայնքի ղեկավարի տեղակալ,</p>	<p>1 տարի</p>	

<p>Միջոցառումներ (գործողություններ) 1.Համայնքի փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման աշխատանքներն իրականացնող կազմակերպության հետ պայմանագրի կնքում: 2.Փողոցների արտաքին լուսավորության համակարգերի ընդլայնման աշխատանքների իրականացում և վերահսկում: 3.Աշխատանքների կատարման ավարտական ակտերի կազմում,քննարկում և հաստատում:</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1.Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 1000,0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
--	---

Ծրագիր 4. Համայնքի աղբարկղների շրջակայքի բարեկարգում

<p>Ծրագրի նպատակ. Բարեկարգել համայնքում տեղադրված աղբարկղների շրջակայքերի ծառայության մատուցման մատչելիությունը համայնքում</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աղբարկղների շրջակայքի բարեկարգման ծառայության որակից բնակիչների բավարարվածության աստիճանը – բավականին լավ</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, Կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի տեղակալ, առաջատար մասնագետ (հողաշինարար), համայնքի բյուջեի միջոցների հաշվին:</p>	<p>1 տարի</p>	
<p>Միջանկյալ արդյունք 1. Բարեկարգվել է համայնքում տեղադրված աղբարկղների շրջակայքը :</p>	<p>Ելքային ցուցանիշներ 1. 1.Շրջակայքը բարեկարգված աղբարկղներ-13 2.Բնակիչների կարծիքը բարեկարգված աղբարկղների շրջակայքից – բավականին լավ</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական</p>	<p>Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի տեղակալ, առաջատար մասնագետ (հողաշինարար), համայնքի բյուջեի միջոցների</p>	<p>1 տարի</p>	

		հասարակություն, բնակիչներ	հաշվին:		
Միջոցառումներ (գործողություններ) 1. Համայնքում տեղադրված աղբարկղների շրջակայքի բարեկարգման աշխատանքներն իրականացնող կազմակերպության հետ պայմանագրի կնքում: 2. Աղբարկղների շարջակայքի բարեկարգման ընթացիկ աշխատանքների իրականացում և վերահսկում: 3. Բարեկարգման աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 1000,0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 3 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ոլորտ 6. Տրանսպորտ՝ Ներհամայնքային ճանապարհների խճապատում					
Ոլորտային նպատակ . Բարձրացնել ներհամայնքային ճանապարհների ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Ներհամայնքային ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) – բավական լավ:			
Ծրագրի նպատակ. 1. Բարեկարգել ներհամայնքային ճանապարհները:	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է ներհամայնքային ճանապարհներով երթևեկելու ծառայության մատուցումը - 80 %-ով	Ծրագրի գնահատման համակարգ, Կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի տեղակալ Իրականացումը՝ Համայնքի բյուջեի միջոցներով	1 տարի	
